



ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

«02» 05 2013թ.

N..... 54-Շ.....

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶՄՅԻ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՑ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ԱՍՓՈՓՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՍՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով և հիմք ընդունելով <<Պետական վիճակագրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածն ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 135-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության համայնքների տեղեկատվական բազայի արդիականացման նպատակով Հայաստանի Հանրապետության համայնքներից և Հայաստանի Հանրապետության մարզպետներից վիճակագրական տվյալների հավաքագրման, ամփոփման և համայնքների տեղեկատվական բազա էլեկտրոնային ծրագիր մուտքագրման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել <Քաղաքային և գյուղական համայնքների տվյալների հավաքագրման հարցաթերթերն ու լրացման վերաբերյալ մեթոդական ուղեցույցը>՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի ղեկավար Կ. Իսախանյանին՝ սահմանել հսկողություն սույն կարգով նախատեսված գործառույթների իրականացման նկատմամբ:

4. Սույն կարգը գործում է 2013 թվականի հունիսի 1-ից:



պաշտոնակատար
Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ